

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

____._____. 2019 թվականի

N _____ Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2019/2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ
ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ /ԱՆՎՃԱՐ/, ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ
ՕՐԴԻՆԱՏՈՒՐԱՅԻ ԵՎ ԻՆՏԵՐՆԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐՆ ԸՍՏ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Կրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում 2019/2020 ուսումնական տարվա պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/ առկա ուսուցմամբ՝

- 1) կլինիկական օրդինատուրայի ընդունելության տեղերն ըստ մասնագիտությունների՝ համաձայն NN 1, 2, 3 և 4 հավելվածների,
- 2) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համար նախատեսված ինտերնատուրա ընդունելության 60 տեղ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2019/2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ
ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ /ԱՆՎՃԱՐ/, ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ
ՕՐԴԻՆԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐՆ ԸՍՏ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	օրդինատուրա
Պաթանատոմիա և կլինիկական մորֆոլոգիա	1
Մանկական անեսթեզիոլոգիա և ռեանիմատոլոգիա	2
Նեոնատոլոգիա	1
Մանկական սրտաբանություն /կարդիոլոգիա/	1
Ուռուցքաբանություն	1
Հոգեբուժություն	1
Արյունաբանություն /հեմատոլոգիա/	1
Մանկական արյունաբանություն և ուռուցքաբանություն	2
ԸՆԴԱՄԵՆԸ	10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2019/2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ՝
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ
ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ /ԱՆՎՃԱՐ/, ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ
ՕՐԴԻՆԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐՆ ԸՍՏ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀՀ առողջապահության նախարարություն

Մասնագիտություն	Քանակ
Լաբորատոր ախտորոշում	3
Ընդհանուր վիրաբուժություն	4
Անեսթեզիոլոգիա և ռեանիմատոլոգիա	4
Ակնաբանություն	2
Մանկաբարձություն և գինեկոլոգիա	2
Քիթ-կոկորդ-ականջաբանություն /օտորինոլարինգոլոգիա/	2
Նյարդաբանություն	4
Ընտանեկան բժշկություն	6
Պալարախտաբանություն /ֆտիզիատրիա/	1
Հոգեբուժություն	2
Մանկաբուժություն	4
Նեոնատոլոգիա	2
Ներքին բժշկություն	4
Ինֆեկցիոն հիվանդություններ	1
Վնասվածքաբանություն և օրթոպեդիա	2
Ճառագայթային ախտորոշում	2
Սրտաբանություն /կարդիոլոգիա/	2
Ներզատաբանություն /էնդոկրինոլոգիա/	1
Շտապբուժություն	4
Մանկական անեսթեզիոլոգիա և ռեանիմատոլոգիա	2
Ուրոլոգիա	1
Մաշկաբանություն և վեներոլոգիա	1
Մեղրիի հատկացվող տեղեր	2
ԸՆԴԱՄԵՆԸ	58

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2019/2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ
ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ /ԱՆՎՃԱՐ/, ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ
ՕՐԴԻՆԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐՆ ԸՍՏ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Արցախի Հանրապետություն

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	օրդինատուրա
Մանկական ավերգություն և իմունություն	1
Մանկական վնասվածքաբանություն և օրթոպեդիա	1
Մանկաբարձություն և գինեկություն	1
Մանկական սրտաբանություն /կարդիոլոգիա/	1
Նեոնատոլոգիա	1
Մանկաբուժություն	2
Ընդհանուր վիրաբուժություն	1
Անեսթեզիոլոգիա և ռեանիմատոլոգիա	1
Մանկական անեսթեզիոլոգիա և ռեանիմատոլոգիա	1
Ակնաբանություն	1
Ընտանեկան բժշկություն	2
Ներքին բժշկություն	1
Ճառագայթային ախտորոշում	2
Քիթ-կոկորդ-ականջաբանություն /օտորինոլարինգոլոգիա/	1
ԸՆԴԱՄԵՆԸ	17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2019/2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ
ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ /ԱՆՎՃԱՐ/, ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ
ՕՐԴԻՆԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐՆ ԸՍՏ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	օրդինատուրա
Ընդհանուր վիրաբուժություն	2
Վնասվածքաբանություն և օրթոպեդիա	1
Անեսթեզիոլոգիա և ռեանիմատոլոգիա	3
Ինֆեկցիոն հիվանդություններ	1
Ճառագայթային ախտորոշում	2
Նյարդաբանություն	1
ԸՆԴԱՄԵՆԸ	10

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ հիմնավորումը

1. Անհրաժեշտությունը.

Նախագիծն ընդունվում է «Կրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետին համապատասխան:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

Արցախի Հանրապետությունը, ՀՀ պաշտպանության նախարարությունը, ՀՀ առողջապահության նախարարությունը և «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը ներկայացրել են առկա ուսուցմամբ կլինիկական օրդինատուրայի, իսկ ՀՀ պաշտպանության նախարարությունը՝ ինտերնատուրայի կրթական ծրագրերով իրենց հայտերը՝ հաշվի առնելով առողջապահական համակարգի ներկայիս ու ակնկալվող կադրային պահանջարկը, մարզային առողջապահական կազմակերպությունների կադրային բացը լրացնելու, մարզային առողջապահական համակարգի տարածքային համաչափ զարգացումն ապահովելու և Երևանի՝ կադրային գերհագեցած համակարգը բեռնաթափելու հարցը և ՀՀ զինված ուժերում ներկայիս և ակնկալվող կադրային պահանջարկը:

Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում առկա են բժշկական կադրային ներուժի պատրաստման, նրանց օպտիմալ և տարածքային համաչափ բաշխման խնդիրներ, որոնց արդյունքում, ներկայումս ՀՀ մարզային առողջապահական կազմակերպություններում առկա է շուրջ 300 թափուր բժշկական հաստիք:

Առողջապահական մարդկային ներուժի խիստ անհավասարաչափ բաշխումը Հայաստանի մարզերում, փոխարենը գերհագեցած աշխատաշուկան Երևանում, որտեղ ամեն 10 000 բնակչին ընկնող բժիշկների քանակը 59 է, իսկ մարզային բուժհաստատություններում այդ ցուցանիշը 17.4 է: Փաստացի, բժիշկների թիվը կրկնակի անգամ ավելի մեծ է Երևանում, քան մարզերում, մասնավորապես, եթե Երևանում բժիշկների թիվը 6383 է, ապա մարզերում՝ 3277: Առողջապահության համակարգը չի կարող զարգանալ, եթե մարզերում առողջապահական ծառայությունները բավարար հասանելի չեն, և մարդկային ներուժը հնարավորին չափ օպտիմալ բաշխված չէ երկրի ողջ տարածքով: Բոլոր մասնագիտություններով բժիշկների պահանջարկը մեծ է հատկապես հեռավոր մարզերում՝ Լոռիում, Սյունիքում, Շիրակում: Ըստ մասնագիտությունների առավել պահանջված են ընտանեկան բժիշկները, անեսթեզիոլոգները,

թերապևտները, նյարդաբանները, վիրաբույժները, մանկաբույժները և այլն:

3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը.

Արցախի Հանրապետությունից, ՀՀ պաշտպանության նախարարությունից, ՀՀ առողջապահության նախարարությունից և «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամից ստացված հայտերի հիման վրա ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն ըստ մասնագիտությունների ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացնում պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/ առկա ուսուցմամբ հատկացված կլինիկական օրդինատուրայի և ինտերնատուրայի ընդունելության տեղերը:

4. Կարգավորման նպատակը և բնույթը.

Կլինիկական օրդինատուրայի կրթական ծրագրով ուսումնառության անվճար տեղերի հատկացումը նպատակ ունի կանոնակարգել բարձրագույն ուսումնական հաստատությունում առկա ուսուցմամբ կլինիկական օրդինատուրայի ընդունելությունը, ինչպես նաև նպաստել բժշկական կադրային ներուժի պատրաստմանն ու ՀՀ զինված ուժերում առկա բժիշկ-սպանների և մարզային առողջապահության կադրային պահանջարկի համալրմանը:

Կլինիկական օրդինատուրայում տեղերի հատկացումը հնարավորություն է ընձեռում ապահովել շարունակական կրթությունը և առողջապահական համակարգի ներկայիս ու ակնկալվող կադրային պահանջարկի համալրումը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը /ԵՊԲՀ/ հատկացված տեղերը հնարավորություն է ընձեռում բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների շարունակական կրթության ապահովում, ինչպես նաև նեղ մասնագիտական և մանկաբուժական ոլորտներում անհրաժեշտ մասնագետներով համալրում:

Ինտերնատուրայում տեղերի հատկացումը նախատեսում է կարգավորել ՀՀ զինված ուժերում առկա բժշկական կազմի թերհամալրվածության խնդիրը:

ՀՀ առողջապահության նախարարությանը հատկացվող նպատակային կլինիկական օրդինատուրայի տեղերը հատկացնելիս հաշվի է առնվել վերջին տարիներին նպատակային կլինիկական օրդինատուրայի արդյունքում բժշկական կադրերով համալրված մարզային բժշկական կազմակերպությունների արդյունավետության ցուցանիշները, որոնք վկայում են, որ մարզային կադրային պահանջարկը համալրելու ամենաարդյունավետ միջոցներից մեկը նպատակային կրթական ծրագրերի՝ այդ թվում նպատակային կլինիկական օրդինատուրայի իրականացումն է, մասնավորապես, եթե 2014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ մարզային բժշկական կազմակերպություններում թափուր հաստիքների թիվը 372-ն էր, 2015 թվականին՝

423-ը, ապա ծրագրի առաջին փուլի արդյունքներով արդեն՝ 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ մարզային բժշկական կազմակերպություններում թափուր հաստիքների թիվը 331 էր, իսկ 2018 թվականին՝ 258, ինչը վկայում է այն մասին, որ նպատակային կլինիկական օրդինատուրան հնարավորություն է տալիս լրացնել մարզային բժշկական կազմակերպությունների կադրային բացը 20-40%-ով:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Արցախի Հանրապետություն, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն և «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ:

6. Ակնկալվող արդյունքը.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը նախատեսում է 2019/2020 ուսումնական տարվա համար պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/ առկա ուսուցմամբ կլինիկական օրդինատուրայի և ինտերնատուրայի կրթական ծրագրերով ուսումնառությունը կազմակերպելու նպատակով ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնել կլինիկական օրդինատուրայի համար 95 տեղ, որից 17-ը՝ Արցախի Հանրապետությանը, 10-ը՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին, 58-ը՝ Առողջապահության նախարարությանը, 10-ը՝ Պաշտպանության նախարարությանը և 60 տեղ ինտերնատուրայի համար:

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանին հատկացվող տեղերը նախատեսում է բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների շարունակական կրթության ապահովում և անհրաժեշտ մասնագետներով համալրում, նպատակային կլինիկական օրդինատուրայի հատկացված տեղերի արդյունքում՝ Հայաստանի Հանրապետությունում 7-8 տարվա մեջ մարզային կադրային պահանջարկի բարելավում, ինչպես նաև Երևանի՝ կադրային առումով գերհագեցած համակարգը բեռնաթափում, ՀՀ Պաշտպանության նախարարությանը հատկացվող տեղերը՝ ՀՀ զինված ուժերում առկա բժշկական կազմի թերհամալրվածության խնդրի լուծում և ինտերնատուրայում նրանց ուսուցումը շարունակելու հնարավորություն:

Տեղեկանք

«2019/2020 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/, առկա ուսուցմամբ կլինիկական օրդինատուրայի և ինտերնատուրայի ընդունելության տեղերն ըստ մասնագիտությունների հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման բյուջեների վրա ազդեցության մասին

Որոշման ընդունման կապակցությամբ պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումներ կամ նվազեցումներ չեն սպասվում:

Տեղեկանք

«2019/2020 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/, առկա ուսուցմամբ կլինիկական օրդինատուրայի և ինտերնատուրայի ընդունելության տեղերն ըստ մասնագիտությունների հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ իրավական ակտերի կամ դրանց ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

1. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մասին ընդունման առնչությամբ այլ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտություն չկա:
2. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը չի հակասում միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին:

<<2019/2020 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/, առկա ուսուցմամբ կլինիկական օրդինատուրայի և ինտերնատուրայի ընդունելության տեղերն ըստ մասնագիտությունների հաստատելու մասին>>

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
<p>ՀՀ Ֆինանսների նախարարություն</p> <p>Հունիսի 27-ի թիվ 01/8-3/10687-2019 գրություն</p>	<p>Առաջարկում ենք Նախագծի հիմնավորումով, իսկ անհրաժեշտության դեպքում Նախագծով բացահայտել և/կամ որոշակիացնել, թե ինչ սկզբունքներով և մոտեցումներով են սահմանվում (ընտրվում) և բաշխվում Ընդունելության տեղերը, ըստ.</p> <p>1. 1 մասնագիտությունների՝ այդ թվում պետության համար առաջնահերթ և կարևորություն ունեցող ոլորտների,</p> <p>1.2 Շահառուների՝ Արցախի Հանրապետության, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ՀՀ պաշտպանության</p>		<p>Նախագծի հիմնավորումը լրացվել է հետևյալով՝</p> <p>1.1 ՀՀ առողջապահության նախարարությանը հատկացվող նպատակային կլինիկական օրդինատուրայի տեղերը հատկացնելիս հաշվի է առնվել ՀՀ առողջապահության բնագավառում առկա բժշկական կադրային ներուժի պատրաստման, նրանց օպտիմալ և տարածքային համաչափ բաշխման խնդիրները:</p> <p>ՀՀ Պաշտպանության նախարարությանը հատկացվող տեղերը հատկացնելիս հաշվի է առնվել ՀՀ զինված ուժերում առկա բժշկական կազմի թերհամալրվածության խնդիրը և ապահովել ինտերնատուրայում նրանց ուսուցումը շարունակելու հնարավորությունը:</p> <p>Արցախի Հանրապետությանը տեղեր հատկացնելիս հաշվի է առնվել Արցախի Հանրապետությունում որոշ մասնագիտությունների գծով բժիշկների սուր պահանջարկը: Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանին տեղեր հատկացնելիս հաշվի է առնվել համալսարանի անվանական կրթաթոշակառու շրջանավարտների մասնագիտական կողմնորոշումը, սովորողների բարձր առաջադիմությունը:</p> <p>1.2 Տեղերի բաշխումը պայամանավորված է շահագրգիռ կողմերի ներկայացվող հայտերի հիման վրա՝ հաշվի առնելով</p>

<p>նախարարության և ՀՀ առողջապահության նախարարության</p> <p>1.3 Նախագծի 2-րդ կետում նշված թափուր մնացած տեղերի՝ ընդգծելով վերջինների սահմանման նպատակահարմարությունը և տարվա ընթացքում այդ տեղերի վերաբաշխման սկզբունքները,</p> <p>1.4 ՀՀ կառավարության 2019թ. ծրագրի առաջնահերթությունների և քաղաքականության թիրախների</p> <p>2. Նախագծի վերաբերյալ դիտողություններ.</p> <p>2.1 Նախագծի վերնագիրն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին, մասնավորապես, Նախագծի վերնագրում «օրդինատորայի» բառից հետո լրացնել «և ինտերնատորայի» բառը, իսկ 1-ին կետում «անվճար» բառից հետո «առկա ուսուցմամբ» բառերը:</p>	<p>նրանց համար առաջնային և կարևորություն ներկայացնող մասնագիտությունները:</p> <p>1.3 Կլինիկական օրդինատորայի առկա ուսուցմամբ թափուր մնացած տեղերի վերաբաշխումը պայմանավորված է ընդունելության ժամանակ առաջացած մրցույթի արդյունքում հավասար միավորներ ունենալու դեպքում տեղերի բաշխման նպատակով և բաշխումն իրականացվում է ընդունելության մրցույթի անցկացմանը զուգընթաց՝ համաձայն ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության, Արցախի Հանրապետության և Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի կողմից ներկայացրած լրացուցիչ հայտերի՝ իրենց տրամադրված տեղերի շրջանակներում:</p> <p>1.4 Ընդունելության տեղերը ձևավորելիս հաշվի են առնվել ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ պաշտպանության նախարարության, Արցախի Հանրապետության կողմից ներկայացված հայտերը՝ ելնելով ոլորտի առաջնահերթությունից և թիրախներից: Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանին հատկացվող տեղերը հնարավորություն է ընձեռում ապահովել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների շարունակական կրթությունը անհրաժեշտ մասնագետներով:</p> <p>Դիտողությունը ընդունելի է:</p>	<p>Նախագծում կատարվել է փոփոխություն:</p>
--	--	---

<p>ՀՀ առողջապահության նախարարություն Հուլիսի 9-ի թիվ ԱԹ/05/11194-19 գրություն</p> <p>ՀՀ պաշտպանության նախարարություն Հուլիսի 8-ի թիվ ՊՆ/510/1132-2019 գրություն</p> <p>Հանրային քննարկում</p> <p>ՀՀ արդարադատության նախարարություն</p>	<p>2.2 Նախագծի Հավելված 1-ում Ընդունելության տեղերը ներկայացված չեն ըստ մասնագիտությունների, ինչը նշված է հավելվածի վերնագրում, ընդ որում նույն հավելվածում «ՀՀ կրթության և գիտության նախարարություն» բառերն անհրաժեշտ է փոխարինել «ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն» բառերով:</p> <p>2.3 Նախագծում Արցախի Հանրապետության և ՀՀ պաշտպանության նախարարության համար Ընդունելության տեղերն ըստ մասնագիտությունների ներկայացված չեն:</p> <p>ՀՀ առողջապահության նախարարությունը առաջարկում է հատկացվող տեղերի քանակը ավելացնել՝ հասցնելով 68-ի:</p> <p>Դիտողություններ և առաջարկություններ չունի:</p> <p>Դիտողություններ և առաջարկություններ չունի:</p> <p>Ա/թ հուլիսի 8-ի հմ. 01/06.1/12709-19 գրությամբ ուղարկվել է փորձագիտական եզրակացության:</p>	<p>Դիտողությունը ընդունելի է:</p> <p>Դիտողությունը ընդունելի է:</p> <p>Դիտողությունը ընդունելի է:</p>	<p>Նախագծում կատարվել է փոփոխություն:</p> <p>Նախագծում կատարվել է փոփոխություն:</p> <p>Նախագծում կատարվել է փոփոխություն:</p>
--	---	---	---